

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

6) Ինչո՞ւ Ս. մկրտութեան խորհուրդը կ'անուանեն «վերստին ծնունդ»:

Մարդ առաջին անգամ ծնելով իր մարմնատուր ծնողներէն, իբրեւ հին մարդ կը ստանայ նախահօր՝ առաջին Ադամի պատկերը, բայց վերքստին ծնելով եկեղեցւոյ Ս. աւագանէն «ջուրէն եւ հոգիէն» իբրեւ նոր մարդ երկրորդ Ադամի՝ Քրիստոսի պատկերը:

Վերստին ծննդեան կարեւորութեան մասին կը խօսի նաեւ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Երբ փարիսեցի Նիկողիմոսը զիջերով կ'այցելէ Քրիստոսի, ան իր հետ կը խօսի մկրտութեան անհրաժեշտութեան մասին ըսելով. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեսք քեզի: Եթէ մարդ ջուրէն եւ հոգիէն չձնի, չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է եւ հոգիէն ծնածը հոգի (տես Յովհ. 3:5-8):

Իսկ Պօղոս առաքեալը այսպէս կը բացատրէ հոգեւոր ծնունդը. «Վասնզի մենք ալ ատեն մը անմիտ էինք, չարութիւններով ու նախանձով կը վարուէինք, բայց մեր փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնը ու մարդասիրութիւնը յայտնուեցաւ: Իր ողորմութեան համաձայն մեզ փրկեց նորեւ ծնանելու աւագանին միջոցաւ ու սուրբ հոգիէն նորոգուելով (Տիտոս 3:3-5): Վե-րստին ծնելով՝ Ս. մկրտութեամբ, մարդ արարածը կ'ուխտէ ձգել իր հին կեանքը եւ այնուհետեւ ապրիլ նոր կեանք՝ Քրիստոսով, ուր մեղքի դէմ անդադար պայքար է, յանուն երկինքի արքայութեան ժառանգման:

ԱՂԱՆԴԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ 5- ՄԱՐԴԸ ԵՒ ՀՈԳԻՆ

Քրիստոս, խաչին վրայ իր մահուր-նէ ետք, գնաց իր խաչին յաղթանակը մեռելներուն ալ հոչակելու, ինչպէս կ'ըսէ Աստուածաշունչը. «Քրիստոս՝ մեղքի համար մէկ անգամ չարչար-ւեցաւ. արգարը՝ անարդարներուն հա-մար, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ, որ թէեւ մեռաւ մարմինով, բայց կենդանի եղաւ հոգիով. բանտի մէջ եղած հոգիներուն ալ գնաց ու փարոզեց» (Ս. Պետ 3:18-19): Իսկ քիչ մը անդին կ'աւելցնէ. «Ասոր համար մեռելներուն ալ աւետարանը փարոզ-ւեցաւ, որպէսզի դատուին մարդոց պէս՝ մարմինով, եւ կենդանի ըլլան Աստու-ծոյ պէս՝ հոգիով» (Ս. Պետ 4:6): Եթէ հոգիները անմահ չըլլային, Պետրոս առաքեալ պիտի չըսէր՝ թէ Քրիստոս գնաց ու մեռելներուն ալ «փարոզեց», այսինքն՝ աւետեց իր յաղթանակը՝ մահուան վրայ:

Քրիստոսի օրով ալ կային Սաղու-կեցիները, որոնք չէին հաւատար հոգիի գոյութեան, ինչպէս նաեւ մեռելներու յարութեան (տե՛ս Գրծ. 23:8): Յիսուս լաւ պատասխան տուաւ անոնց, երբ օր մը զինք փորձելու համար եկան եւ մեռելներու յարութեան կապակցու-թեամբ հարցում մը ըրին:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ՃԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ՄԱՅԻՍ 2018

ԹԻՒ 19

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Գրծ. 23.12-35 Ա. ՅԻ. 5.13-21
ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՈՒ 12.12-23

ԵՐԿՐՈՐԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Չատկի տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմատենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեա՛լ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էջ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Մի՛ վախճար, ո՛վ Երուսաղէմ, Միոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորը քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ այն ատեն յիշեցին, թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին, թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին, թէ ինչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնե՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել: Ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»:
Փիլիպպոս եկաւ Անդրեասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՐԿՐՈՐԳ ԾԱՂԿԱԶԱՐԳ

Երկրորդ Ծաղկագարդի տօնախմբութիւնը սահմաններ է ներսէս Շնորհալիի եղբայրը՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, հիմնուելով Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապ գտնուած ժամանակ պատահած մէկ աւանդական դէպքին վրայ:

Գրիգոր Լուսաւորիչ երբ Խոր Վիրապ կը գտնուէր, անոր կը սպասարկէր հրեշտակ մը: Համբարձման չորրորդ օրը, Կիրակի օր հրեշտակը չ'երեւնար: Միւս օրը Լուսաւորիչ կը հարցնէ պատճառը եւ կը տեղեկանայ, որ այդ օրը երկնային քահանայապետութիւնը կը տօնէր Յիսուսի երկինք համբառնալը եւ նոյն օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր, որուն ինք կը պատկանէր:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղուծիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստոս, դժն առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան քունդորմութեամբը՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ դժն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ»Ը, ՈՐ ՔԱՀԱՆԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔԻՆ ՅԱՃԱՍ ԿԸ ԿՐԿՆԷ

Հետեւեալ իմաստը ունի. նախ՝ Քրիստոս իր ծնունդով երկինքի եւ երկրի միջեւ խաղաղուծիւն հաստատեց, ինչպէս հրեշտակները երգեցին: Ապա՝ մկրտութենէն ետք աշխարհին արքայութեան Աւետարանը սկսաւ քարոզել եւ Աստուծոյ հետ հաշտութեան ճանապարհը սկսաւ ուսուցանել: Ի վերջոյ, մատնութեան երեկոյին, առաքեալներուն աւանդեց ըսելով. «Խաղաղուծիւն կը թողում ձեզի: Իմ խաղաղուծիւնս է որ կու տամ ձեզի» (ՅՀ. 14:27), եւ քահանան Քրիստոսէն առնելով խաղաղուծիւնը, ժողովուրդին կու տայ:

Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՌԱՄՆՕՐԵԱՅ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Ի հետեւումն Հին Կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը զինք 40-րդ օրը տաճար կը տանի ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ ընծայելու համար (տե՛ս Ղեւտ. 12:6-8): Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ինքն է՝ Հին Ուխտի Եկեղեցիին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ: Այդ պատճառաւ, Նոր Ուխտի Եկեղեցին ալ տնօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածններուն:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Եթէ բարեպաշտութիւնդ զուր կը թուի քեզի, կարդա՛ Եփեսացիներուն 5.1-20

¹Աստուծո՛յ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները, ²եւ սիրո՛վ շարժեցէք այնպէս, ինչպէս *Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ *գոհ: ³Պոռնկութեան, որեւէ պղծութեան կամ ագահութեան խօսքի իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէ՛ս կը վայելէ Աստուծոյ ժողովուրդին: ⁴Վայել չէ որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք, այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պետք է ըլլայ: ⁵Մէկ բան վստահ գիտցէք, թէ ոեւէ մէկը որ պոռնկութիւն կ'ընէ, պղծաւեր է կամ ագահ, ինչ որ կոպաշտութիւն է, ժառանգութիւն պիտի չունենա՛յ Քրիստոսի եւ Աստուծոյ *արքայութեան մէջ: ⁶Հետեւաբար, չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ, որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անհնազանդ մարդոց վրայ: ⁷Ասկէ ետք որեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէեւ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ *Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար, լոյսի որդիներուն վայել ձեռով ապրեցէք, ⁹որովհետեւ լոյսին պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ նշմարտութիւնը: ¹⁰Չանագէ՛ք հասկնալ՝ թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ, ¹¹եւ բնաւ մասնակից մի՛ ըլլաք խաւարին գործերուն, որոնք Աստուծոյ կամեցած պտուղները չեն տար:

Սիրելի ընթերցող շարունակէ սոյն գրութիւնը ունենալով Նոր Կտակարանի Եփեսացիներու գիրքը:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՄՐՏԻ ԽՈՐԵՐԷՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԽՕՍՔ

Ու հիմա ո՛վ իմ յանցաւոր անձս, որովհետեւ շրթունքով եւ խօսքով կը կանչես բարձեալն Աստուած, որ գործերով միայն կը գրաւուի եւ ստեղծաբանութեամբ չի կաշառուիր, որովհետեւ սիրտդ միշտ դէպի Եգիպտոս ուղղած ես, այս մասին քեզի նմանագոյն եւ յարմար ի՞նչ օրինակ դնեմ հոս:

Պատժակիցն եմ կործանուած Աոդոմի, ըմբերանուած դատախազն եմ Նիմուէի, Հարաւի Տիկիկէն աւելի երկչոտ բարբարոս մըն եմ. Մանանէն աւելի վատթարագոյն, Ամաղէկէն աւելի յամառ, կուռքերու անսուրբ քաղաքն եմ...:

Բայց դուն, Աստուած, հոգիներու եւ մարմիններու Աստուած՝ ըստ աստուածաշնորհին Մովսէսի, երկայնամիտ եւ բազումնորմ՝ շնորհէ ինձի որ քու օրհնեալ կամփիղ հաճութեամբ աւարտեմ իմ սկսած ողբերգութիւնս... Ինձի պէս չարագործին, որ կեանքիս օրերուն չափ մեղքերով ապրած եմ, մի՛ հատուցանեք անվնաս մնացած տանջանքներու պատիժը: Ապրեցուր զիս՝ Գթա՛ծ. լսէ՛ ինձի՛ Ողորմա՛ծ. մարդասիրէ՛ Ներող, ինչպէ՛ Երկայնամիտ պաշտպանէ՛ Ապաւէն, բարերարէ՛ Հօր, ագատէ՛ Ամենակալ, կենսագործէ՛ Նորոգող, ծերականգնէ՛ Ահաւոր, լուսաւորէ՛ Երկնային, բժշկէ՛ Հնարիմաց, քաւէ՛ Անգնին, պարգեւաւորէ՛ Առատաձիր, շնորհագարդէ՛ Աննախանձ, հաշտուէ՛ Ամմեղ, ընդունէ՛ անոխակալ, մաքրէ՛ պարտքերէ՛ Օրհնեալ: Եթէ թշուառութեան օրը աչքերս յառեմ՝ երկեակ վտանգներուն նայելով, Քու փրկութիւնդ տեսնեմ ինձի յոյս ու ինձամակալ Ամէն: